Նոյեմբերյանի ավագ դպրոցի
Տնօրեն՝ Ս.Բուդաղյան
Հաստատում եմ

26.01.2024

X Սուսաննա Բուդաղյան

Signed by: BUDAGHYAN SUSANNA 7814690242

Նոյեմբերյանի ավագ դպրոց 2023 – 2024 ուսումնական տարի

Նոյեմբերյանի ավագ դպրոցի ուսուցիչ՝ Ա. Երեմյան

ՆԶՊ և անվտանգ կենսագործունեության թեմատիկ պլան

շաբաթական 1 ժամ, տարեկան 34 ժամ

12 դասարան

		Ռազմարվեստի պատմության հիմնադրույթներ		
1		**Թեմա 1.**Զինվորական երդում	1 ժամ	
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ. 1.1զինվորական երդման գաղափարի վերաբերյալ, 1.2.զինվորական երդում տալու կարգի և ձևի մասին: 2.Ուսուցանել երդման տեքստը: 3.Ձևավորել հայրենասիրական աշխարհայցք:		

	Վերջնադյունք	1.*Գիտի*զինվորական երդման տեքստը:2.*Բացատրի*զինվորական երդման կարգն ու ձևը:		
2		**Թեմա 2.**ՀՀ ԶՈՒ կադրերի պատրաստման համակարգը	1 ժամ	
	Նպատակը	1.Ծանոթացնել ՀՀ ԶՈՒ կադրերի պատրաստման համակարգին, զինվորական մասնագիտությամբ շարունակելու հնարավորությանը: 2.Ձևավորել հայրենասիրական աշխարհայացք, կարևորել բանակի դերը երկրի պաշտպանության գործում:		
	Վերջնադյունք	Պատկերացում *ունի*ՀՀ ԶՈՒ կադրերի պատրաստման համակարգի, զինվորական մասնագիտությունների վերաբերյալ:		
		Մարտավարության հիմունքներ		
3-5		**Թեմա 1**. Մոտոհրաձգային ջոկի պայքարը հակառակորդի հարձակման միջոցների դեմ	3ժամ	
	Նպատակը	1.Ծանոթացնել հակառակորդի զրահատեխնիկայի և օդային հարձակման միջոցների դեմ պայքարիմոտոհրաձգային ջոկի հնարավորություններին: 2.Ձևավորել խմբային որակներ՝ մարտական և այլ արտակարգ իրավիճակում արդյունավետ գործելու համար:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* և *նկարագրի* հակառակորդի զրահատեխնիկայի բնութագրերը, առանձնահատկությունները, դրանց թույլ կողմերը: 2.*Թվարկի*. 2.1.ՄՀՋ հակատանկային միջոցները, 2.2.հակառակորդի օդային հարձակման միջոցների դեմ պայքարի ՄՀՋ հնարավորությունները: 3.*Գիտի* դրանց դեմ հրաձգային կրակի հեռավորության և առաջանցիկ նշանառության մասին:		
6-7		**Թեմա 2**. Մոտոհրաձգային ջոկի պայքարը հակառակորդի դիպուկահարների, դիվերսիոն հետախուզական խմբերի դեմ	2ժամ	գ
	Նպատակը	Ձևավորել պատկերացումներ.հակառակորդի դիպուկահարների, դիվերսիոն հետախուզական խմբերի և մոբիլ ջոկատների դեմ պայքարի վերաբերյալ:		

	Վերջնարդյունքը	1.*Գիտի* հակառակորդիդիպուկահարների, դիվերսիոն հետախուզական խմբերի և մոբիլ ջոկատների դեմ պայքարի ձևերն ու հնարները: 2.*Տարբերի* դիվերսիոն հետախուզական խմբերի հնարավորությունները՝ մոբիլ ջոկատների ունեցած հնարավորություններից:		
		Կրակային պատրաստություն		
8-10		**Թեմա 1. Նշանառության ճշգրտումներ**	3ժամ	
	Նպատակը	1.Բացատրել ինքնաձիգից նշանառության ճշգրտումները հաշվարկումըտեղաշարժվող հակառակորդի և տարբեր ուժգնության կողային քամու դեպքում: 2.Ուսուցանել նշանակետի հեռավորության որոշման կարգը, ինչպես նաև քամու շարժման արագությունն ու ուղղությունը:		
	Վերջնարդյունքը	1.*Հաշվարկի* ինքնաձիգից նշանառության ճշգրտումները հակառակորդի տեղաշարժի և կողային քամու դեպքում: 2.*Որոշի*նշանակետի հեռավորությունը, ինչպես նաև քամու շարժման արագությունն ու ուղղությունը:		
11-13		**Թեմա 2.**Ժամանակակից զենքերն ու զինատեսակները	3 ժամ	
	Նպատակը	Ձևավորել պատկերացումներ ժամանակակից մարտերում օգտագործվող զենքերի, զինատեսակների և նրանց հնարավորությունների վերաբերյալ:		
	Վերջնարդյունքը	*Գիտի*ժամանակակից զենքերն ու զինատեսակները, նրանց հնարավորությունները:		
		Իրավական պատրաստություն		
14		**Թեմա 1.** ՀՀ ԶՈՒ կանոնադրություն: Զինծառայողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները	1 ժամ	
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ բանակային կարգ ու կանոնի վերաբերյալ: 2.Ուսուցանել զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի*բանակային կարգ ու կանոնը: 2.*Թվարկի* զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները:		
		Ռազմական տեղագրության հիմունքներ		

15-17		**Թեմա 1.** Հեռավորության որոշման եղանակլները	2 ժամ	գ
	Նպատակը	Բացատրել տեղանքում հեռավորության որոշման եղանակներն ու հնարները		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի*հեռավորություններիչափման մեթոդները: 2.*Կատարի* հեռավորության չափումներ տեղանքում առկա միջոցներով:		
		Թեմա 2. Գետի լայնության, ծանծաղուտների խորության և առարկաների բարձրությունների որոշման եղանակները	1 ժամ	գ
	Նպատակը	Բացատրել լայնությունների, խորությունների և բարձրությունների որոշման ոչ ստանդարտ եղանակները:		
	Վերջնարդյունքը	*Գիտի*գետի լայնության, ծանծաղուտների խորության և առարկաների բարձրությունների որոշման եղանակները:		
		Լեռնայինհատուկ պատրաստության հիմունքներ		
18-20		**Թեմա 1.** Լեռնային պատրաստության տարրերը	3 ժամ	
	Նպատակը	Ձևավորել պատկերացումներ արդյունաբերական ալպինիզմի, փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ կիրառվող հանդերձանքի և հանգույցների անհրաժեշտության ու տեսակների վերաբերյալ:		
	Վերջնարդյունքը	1.*Գիտի* արդյունաբերական ալպինիզմի ժամանակ կիրառվող հնարները, փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ կիրառվող հանդերձանքի ձևերն ու առավելությունները, հանգույցների տեսակները: 2.*Պատրաստի* հանգույցներ, *կիրառի*արդյունաբերական ալպինիզմի պարզագույն հնարները:		
21-23		**Թեմա 2. Լեռնահրաձգային պատրաստություն**	3 ժամ	
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ. 1.1.հրաձգության վայրին ներկայացվող պահանջների, 1.2.թեք տարածքներում հրաձգության հիմնական դիրքավորումների և դրանց անցումների, 1.3.բարձր-լեռնային տեղանքում հրաձգության առանձնահատկությունների վերաբերյալ:		
	Վերջնարդյունքը	1.*Ընտրի*, *քողարկի* դիտարկման և հրաձգության վայրը:		

		2.*Տիրապետի* հրաձգության հիմնական դիրքավորումներին և դրանց անցումներին լեռնային թեք տարածքներում: 3.*Գիտի* բարձր-լեռնային տեղանքում հրաձգության առանձնահատկությունները:		
		Կապ և տեղեկատվական անվտանգություն		
24-25		**Թեմա 1.** Տեղեկատվական անվտանգություն	2 ժամ	գ
	Նպատակը	1.Ծանոթացնել ՀՀ ԶՈՒ-ում տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը: 2.Բացատրել«ռազմական ոլորտի պետական և ծառայողական գաղտնիք» հասկացությունը:		
	Վերջնարդյունքը	*Ներկայացնի* ՀՀ ԶՈՒ-ում տեղեկատվական անվտանգության հետ կապված հիմնախնդիրը, ռազմական ոլորտի պետական ու ծառայողական գաղտնիքների հնարավոր արտահոսքի վտանգը, դրա դեմ պայքարի ձևերն ու միջոցները:		
		Հոգեբանական պատրաստության հիմունքներ		
26-27		**Թեմա 1.** Հոգեբանական պատերազմ	2 ժամ	
	Նպատակը	1.Ձևավորել պատկերացումներ տեղեկատվական-հոգեբանական պայքարի և հոգեբանական պատերազմի վերաբերյալ: 2.Ծանոթացնել հոգեբանական ներգործության և հոգեբանական պաշտպանության տեսակներին, մեթոդներին ու ձևերին:		
	Վերջնարդյունքը	1.*Բացատրի*տեղեկատվական-հոգեբանական պայքարև հոգեբանական պատերազմ հասկացությունները: 2.*Թվարկի* հոգեբանական ներգործության և հոգեբանական պաշտպանության կարևորագույն տեսակները, մեթոդներն ու ձևերը:		
		Առաջին օգնության հիմունքներ		
28		***Թեմա 1.*** Շրջապատում գտնվող առարկաների օգտագործումը առաջին օգնության ցուցաբերման ժամանակ (ըստ վնասվածքների)	1 ժամ	
	Նպատակը	1.Բացատրել շրջապատում գտնվող առարկաների օգտագործումը առաջին օգնության ցուցաբերման ժամանակ (ըստ վնասվածքների). 1.1.պլաստիկե շշեր, կպչուն ժապավեն, սննդային թաղանթ, ստվարաթուղթ, պոլիէթիլենե տոպրակներ և այլ պարագաներ,		

		1.2.վիրակապական նյութերի փոխարինիչներ և այլն:		
	Վերջնարդյունքը	*Օգտագործի* շրջապատում գտնվող առարկաները առաջին օգնության ցուցաբերման ժամանակ (ըստ վնասվածքների):		
29-30		**Թեմա 2.** Տուժածների շտապ դուրսբերումը և տեղափոխումը մեկ կամ երկու հոգով	2 ժամ	
	Նպատակը	1.Ուսուցանել. 1.1.տուժածի տեղաշարժման, շտապ դուրսբերման և տեղափոխման հիմունքները, 1.2.տեղափոխումը ձեռքի տակ եղած միջոցներով, 1.3.տեղափոխումը աթոռով, 1.4.շտապ դուրսբերումը փլատակներից, ավտոմեքենայից և այլն:		
	Վերջնարդյունքը	1.Ճիշտ *ներկայացնի* տուժածին անվտանգ տեղափոխման եղանակները և միջոցները: 2.*Կատարի* տուժածների տեղաշարժումը, շտապ դուրսբերումը և տեղափոխումը, *որոշի* տարահանման ձևը, ելնելով առկա վնասվածքներից: 3.*Ընտրի* անհրաժեշտ գույքը և մարդկանց քանակը:		
31-32		**Թեմա 3.** Տուժածների տեղափոխումը մի քանի հոգով	2 ժամ	
	Նպատակը	1.Սովորեցնել տուժածին անվտանգ վայր տեղաշարժման, շտապ դուրսբերման և տեղափոխման հիմունքները, նպատակները, առաջացող խնդիրները: 2.Ցուցադրել և բացատրել տուժածին տեղափոխման եղանակներն ու միջոցները:		
	Վերջնարդյունքը	1.Ճիշտ *ներկայացնի* տուժածին անվտանգ տեղափոխման եղանակները պատգարակներով: 2.*Կատարի*տուժածների պատգարակումը և տեղափոխումը, ելնելով առկա վնասվածքներից: 3.*Ընտրի* անհրաժեշտ գույքը և մարդկանց քանակը: 4.Ձեռքի տակ եղած միջոցներով *պատրաստի* պատգարակներ:		
33		***Թեմա 4.*** Հարձակման ժամանակակից զենքերի (այդ թվում միջազգային պայմանագրերով արգելված) կիրառումից առաջացող վնասվածքները և տուժածներին առաջին օգնությանցուցաբերումը	1 ժամ	

	Նպատակը	1.Ծանոթացնել հարձակման ժամանակակից զենքերից առաջացող վնասվածքները. 1.1.հրկիզող զենքերի խառնուրդերից (նապալմ, սպիտակ ֆոսֆոր, տերմիտ, պիրոգել և այլն) առաջացող այրվածքների յուրահատկությունները, 1.2.գնդիկավոր, կասետային և ծավալային (վակուումային, ավելցուկային ճնշման) ռումբերից առաջացող վնասվածքների յուրահատկությունները և անվտանգության կանոները, 1.3.կառավարվող, ավիացիոն և ԱԹՍ-ների կողմից կիրառվող բարձր ճշգրտության ռումբերի հարվածային մեխանիզմները (հեռատեսիլ և ջերմատեսիլ համակարգեր) և առաջացող վնասվածքների բնույթը:		
	Վերջնարդյունքը	1.*Բացատրի*հարձակման ժամանակակից զենքերից առաջացող վնասվածքներով տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու կարգը՝ հաշվի առնելով կիրառված զենքի յուրահատկությունները: 2.*Ներկայացնի*նման զենքերից առաջացած բազմակի, զուգակցված և համակցված (կոմբինացված) վնասվածքներով տուժածների ախտորոշումըև արագ ցուցաբերի առաջին օգնություն ըստ նրանց առանձնահատկությունների:		
34		**Ամփոփում**	1 ժամ	